

# ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

## ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989\_2024.2-87

**Հիմնաբառեր.** *ՕՈՒՆ, ներդրումների ստուգման կառուցակարգեր, ազգային անվտանգություն, աշխարհաքաղաքական փարաձայնություններ*

Աշխարհաքաղաքական տարաձայնությունները վերջին մի քանի տարիներին իրենց կնիքն են դրել օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) հոսքերի կառավարման վրա: Եթե մինչև համավարակի բռնկումը՝ համաաշխարհային տնտեսության մեջ ակտիվորեն վերացվում էին ՕՈՒՆ-ի հոսքերի խոչընդոտները, ապա վերջին տարիներին ներդրումների ստուգման նոր կառուցակարգեր են ներդրվում: Դրանց մի զգալի մասը կապված է օտարերկրյա ներդրումների անվտանգային խնդիրների կառավարման հետ: Այս միտումը բնորոշ է հատկապես զարգացած երկրներին: Զարգացող երկրներն ավելի զգուշավոր են անվտանգային ռիսկերի հետ կապված սահմանափակումներ կիրառելիս, քանի որ մտավախություն ունեն, որ դրանք կարող են անդրադառնալ ՕՈՒՆ-ի ներհուսքի վրա:

Վերջին ժամանակներս «Ամերիաբանկի» վաճառքի վերաբերյալ լուրերը մտահոգություններ առաջացրին փորձագիտական շրջանակներում՝ պայմանավորված անվտանգային խնդիրներով: Մասնավորապես՝ տվյալ գործարքում խնդիրը թուրքական կամ ադրբեջանական հետք լինելուն էր վերաբերում: Թեև ՀՀ բանկերի միության նախագահը դրական էր գնահատում այս գործարքը և նշում, որ բանկերի առուվաճառքը սովորական գործընթաց է, այդուհանդերձ առկա էին մտահոգություններ՝ կապված գործարքի ոչ թե տնտեսական կողմի, այլ քաղաքացիների անձնական


<sup>1</sup> Ինչո՞ւ է Հայաստան գալիս Bank of Georgia-ն: Բանկերի միությունում անհանգստացած չեն, (20.02.2024) <https://hy.armradio.am/archives/552676>



### Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ»  
հետազոտական կենտրոնի  
փորձագետ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրպսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առայսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

 <https://orcid.org/0000-0001-7669-8626>

տվյալների արտահոսքի վտանգի հետ: Այլ կերպ ասած, կար մտավախություն, որ տվյալ օտարերկրյա ներդրումներն ազգային անվտանգության ռիսկեր են պարունակում:

Աշխարհի բազմաթիվ երկրներում գործում են իրավական կառուցակարգեր, որոնք կարգավորում են օտարերկրյա ներդրումների հոսքերը՝ անվտանգային նկատառումներով: Դիտարկենք, թե ինչ իրավիճակ է մեր երկրում՝ այս առումով:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը բաց է օտարերկրյա ներդրումների համար<sup>2</sup>: «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը սահմանում է այն պայմանները, որոնց առկայության դեպքում օտարերկրյա ներդրումները թույլատրվում են: Համաձայն օրենքի՝ օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունները կարող են իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված ամեն տեսակի տնտեսական գործունեություն, միաժամանակ, գործունեության որոշ տեսակներով կարող են զբաղվել միայն լիզենցիա ստանալուց հետո: Նույն օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ, ազգային անվտանգության ապահովման պահանջներից էլնելով, կարող են սահմանվել այն ոլորտները, որտեղ օտարերկրյա ներդրումները սահմանափակվում կամ արգելվում են<sup>3</sup>: Օրենքում, սակայն, չեն հստակեցվում այդ ոլորտները: Փոխարենը՝ կան որոշակի սահմանափակումներ տնտեսության մի շարք ոլորտներին վերաբերող օրենսդրություններում: Օտարերկրյա կապիտալի մասնակցության չափի սահմանափակումներ են առկա հեռուստատեսության և ռադիոյի, օդային տրանսպորտի ոլորտներում, իսկ գործունեության որոշ տեսակներ (ծառայություններ) վերապահված են միայն ՀՀ քաղաքացիներին՝ նոտարներ, Հայաստանում գրանցված ինքնաթիռների անձ-

նակազմի անդամներ, քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման և հողի կառավարման մասնագետներ<sup>4</sup>:

Հայաստանի մի շարք ներդրումային երկկողմ պայմանագրեր (օրինակ՝ Ղազախստանի, Լատվիայի, Ֆինլանդիայի հետ) պարունակում են ազգային անվտանգության հետ կապված կետեր, որոնք ևս ընդհանրական են և ենթադրում են, որ այդ համաձայնագրերը հետ չեն պահում կողմերին իրականացնելու գործողություններ, որոնք կբխեն ազգային անվտանգային շահերի պաշտպանությունից<sup>5</sup>: Այսպիսով՝ ՀՀ օրենսդրությունը, պայմանավորված ազգային անվտանգությամբ, որոշակի սահմանափակումներ է դնում գործունեության մի շարք տեսակների վրա, սակայն ներդրումների ստուգման կամ վերահսկողության օրենքներ կամ նորմեր, կապված անվտանգությանը սպառնացող ռիսկերի հետ, առկա չեն: Հետևապես՝ աշխարհաքաղաքական ներկայիս իրողություններում հարց է ծագում՝ արդյո՞ք պետությունը պետք է սահմանափակի կամ ստուգի այն ներդրումները, որոնք հնարավոր սպառնալիք են ներկայացնում իր համար:

Մակրոմակարդակում ներդրումներն ազգային եկամտի բաղկացուցիչ են, որոնք էական դերակատարում ունեն տնտեսական աճի ապահովման գործում<sup>6</sup>: ՕՈԽՆ-ը նպաստում է տեխնոլոգիաների տարածմանն ու բարձրացնում տեղական շուկաների մրցունակության մակարդակը, բարելավում ակտիվների բազմազանեցման գործընթացը, ինչպես նաև թույլ տալիս իրականացնել կապիտալի կուտակում՝ կապիտալի շարժի այլ տեսակների համեմատ պակաս ռիսկային ձևով<sup>7</sup>: Օտարերկրյա ներդրումների ներգրավումը հատկապես կարևոր է փոքր զարգացող տնտեսությունների համար, որոնց բնորոշ է ներքին ռեսուրսների սահմանափակությունը՝ պայմա-

<sup>2</sup> Investment Policy Review of Armenia, 2019, [https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3\\_en.pdf](https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3_en.pdf)  
<sup>3</sup> ՀՀ օրենքը «Օտարերկրյա ներդրումների մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872>  
<sup>4</sup> Investment Policy Review of Armenia, 2019, [https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3\\_en.pdf](https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3_en.pdf)  
<sup>5</sup> ՀՀ միջազգային ներդրումային համաձայնագրեր, <https://investmentpolicy.unctad.org/international-investment-agreements/countries/9/armenia>  
<sup>6</sup> Հովանյան Լ.Ա., Օտարերկրյա ներդրումների խթանման ուղիները Հայաստանում, Регион и мир, 2019, N6:  
<sup>7</sup> Albori, Marco and Corneli, Flavia and Nispi Landi, Valerio and Schiavone, Alessandro, The Impact of Restrictions on FDI (November 25, 2021). Bank of Italy Occasional Paper No. 656, Available at SSRN: <https://ssrn.com/abstract=4032723> or <http://dx.doi.org/10.2139/ssrn.4032723>

նավորված ոչ բավարար ներքին խնայողություններով, թույլ զարգացած ֆինանսական շուկաներով և այլն: Այս ամենով հանդերձ, ՕՈՒՆ-ը զերծ չէ բացասական ազդեցություններից: Որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ դա կարող է նաև ապակայունացնող ազդեցություն ունենալ զարգացող երկրների ֆինանսական շուկաների և ամբողջությամբ վերցրած տնտեսությունների վրա<sup>8</sup>: Օտարերկրյա ներդրումները կարող են առաջացնել ազգային անվտանգությանը սպառնացող ռիսկեր, օրինակ՝ երբ դրանք կատարվում են թշնամական երկրների կառավարություններին պատկանող կազմակերպությունների կողմից կամ կրիտիկական ենթակառուցվածքներում և այլն:

Զարգացած երկրները, սկսած 1970-ականներից, իսկ զարգացող երկրները՝ վերջին քսան տարիների ընթացքում ակտիվորեն վերացնում են ՕՈՒՆ-ի հոսքի խոչընդոտները՝ համաշխարհային տնտեսության ազատականացման, գլոբալ արժեքի շղթաների զարգացման համատեքստում: Միաժամանակ, ՕՈՒՆ-ի առումով, միշտ գործել են որոշակի սահմանափակումներ և կարգավորումներ, որոնց մեծ մասը՝ տրնտեսական խնդիրներ լուծելու, մասնավորապես՝ ներքին ներդրողին օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելու, կրիտիկական նշանակության ապրանքների մատակարարումների խափանման ռիսկերից խուսափելու և տնտեսության բնականոն գործունեությունն ապահովելու նկատառումներով<sup>9</sup>: Բացի տնտեսական պատճառներից, որոշ սահմանափակումներ պայմանավորված են եղել պետության ինքնիշխանության կորստի ռիսկերով և պետական անվտանգային շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ:

Այսպիսով՝ մինչև վերջերս օտարերկրյա ներդրումների նկատմամբ սահմանափակումների նշանակալի մասը տնտեսա-

կան ռիսկերին դիմակայելու և հովանավորական նպատակ է ունեցել ու վերաբերել ռազմավարական նշանակության ոլորտներին: Անվտանգային հարցերը ևս եղել են ուշադրության կենտրոնում, բայց դրանք առաջնահերթություն չեն համարվել: Սկսած 2000 թթ. վերջից, աշխարհաքաղաքական իրողություններով պայմանավորված, օտարերկրյա ներդրումների անվտանգային ռիսկերի նկատմամբ ուշադրությունը կտրուկ մեծացել է:

Զարգացած երկրների մեծ մասը, որն ավանդաբար բաց է եղել ՕՈՒՆ-ի համար, վերջին տասը տարիների ընթացքում ընդունել է ներդրումների ստուգման նոր կառուցակարգեր (ՆՍԿ) կամ խստացրել է արդեն գոյություն ունեցողները: Այդ կառուցակարգերը թույլ են տալիս կառավարությանն ուսումնասիրել, որոշ պայմաններով հաստատել կամ արգելել այն գործարքները, որոնք ազգային անվտանգության հավանական սպառնալիքներ են պարունակում: Պետության ուշադրության կենտրոնում են հայտնվում ռազմավարական նշանակության ոլորտներում (կրիտիկական ենթակառուցվածքներ, տեխնոլոգիաներ, առողջապահություն, մեդիա և այլն) կատարվող ներդրումները կամ էլ այն իրողությունը, երբ ներդրողը վերահսկվում է երրորդ երկրի կառավարության կողմից<sup>10</sup>:

Ներդրումային ռիսկերի կառավարման անվտանգային կառուցակարգերի կիրառումը հատկապես ակտիվացել է՝ սկսած 2009 թվականից՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո: Կտրուկ աճ է նկատվել COVID-19 համավարակի համապատկերում, այնուհետև փոքր աճ՝ ռուս-ուկրաինական պատերազմի համատեքստում: Վերջինս, ըստ ՏՀՀԿ ուսումնասիրության, պայմանավորված էր պատերազմի՝ համավարակի համեմատ նվազ տնտեսական ազդեցությամբ ու այն

<sup>8</sup> Дорошенко С. В., Лаптева Е. В. Динамическое моделирование макроэкономических факторов потоков портфельных инвестиций в страны с формирующимися рынками // Ars Administrandi (Искусство управления). 2021. Т. 13, № 3. С. 359–380. DOI: 10.17072/2218-9173-2021-3-359-380.

<sup>9</sup> OECD (2021), Middle East and North Africa Investment Policy Perspectives, OECD Publishing, Paris, <https://doi.org/10.1787/6d84ee94-en>.

<sup>10</sup> Bencivelli, Lorenzo and Faubert, Violaine and Gallo, Florian Le and Négrin, Pauline, The rise in FDI screening in the EU and major advanced economies (December 2023), <https://www.banque-france.fr/en/publications-and-statistics/publications/rise-fdi-screening-eu-and-major-advanced-economies>


կապված սահմանափակումները դեռևս չէին հանվել և շարունակում էին գործել<sup>11</sup>:

Գոյություն ունեն ներդրումային ռիսկերի կառավարման բազմաթիվ գործիքներ, մասնավորապես՝ մասնակցության առավելագույն շեմի սահմանում (ownership ceiling), զգայուն ակտիվների պետականացում, «ոսկե» բաժնետոմսեր, ներդրումների ստուգման կառուցակարգեր և այլն: Վերջին աշխարհաքաղաքական իրադարձությունների խորապատկերում ՕՌԻՆ-ի ռիսկերը կառավարելու ջանքերում գերակշռում են ներդրումների ստուգման կառուցակարգերը (ՆՍԿ), որոնք ենթադրում են ոչ հստակ, վերացական չափանիշներով սահմանված գործարքների շրջանակից առանձին գործարքների ստուգում (օրինակ՝ որոշ տնտեսություններ առանց օրենքների և կանոնների էական փոփոխությունների հայտարարել են, որ մանրակրկիտ զննելու են այն ներդրումները, որոնք կատարվում են Ռուսաստանի կամ Բելառուսի կողմից վերահսկվող կամ դրանց ազդեցության տակ գտնվող ներդրողների կողմից<sup>12</sup>): Այս կառուցակարգն առաջին անգամ կիրառվել է ԱՄՆ-ում, Կանադայում և Ավստրալիայում՝ 1970-

80-ական թթ., ավելի ուշ՝ Եվրոպայում: Սկզբնական շրջանում նման կառուցակարգի կիրառումը պայմանավորված էր զարգացող երկրներից դեպի զարգացած երկրներ ներդրումների ընդլայնմամբ, իսկ վերջին տարիներին՝ աշխարհաքաղաքական տարածայնություններով:

Ներդրումների ստուգման կառուցակարգերը կարելի է տարանջատել ըստ որոշակի հատկանիշների՝ ներդրողի ինքնության կամ օտարերկրյա կառավարության հետ կապի ստուգում, ըստ ճյուղի կամ գործարքի տեսակի ստուգում և այլն:

Կառուցակարգերից շատերը հնարավոր սպառնալիք ներկայացնող գործարքները սահմանելիս կիրառում են ազգության կամ ռեզիդենտության սկզբունքը, այսինքն՝ երկիրը որոշակի պետության ներկայացուցիչների համար բացառում է ստուգումները կամ, հակառակը, ավելի խիստ ստուգման է ենթարկում: Բացառություններ կարող են սահմանվել նույն ռազմական դաշինքի կամ ինտեգրացիոն միավորման անդամ երկրների ներդրողների նկատմամբ: Օտարերկրյա կառավարությունների հետ կապված ներդրողները ազգային անվտանգության հատուկ ռիս-



■ Ազգային անվտանգության հետ կապված ներդրումային միջոցառումներ, նոր կամ փոփոխություն  
 ■ Չուս ներդրումային միջոցառումներ

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

**Ներդրումների հետ կապված՝ նոր անվտանգային միջոցառումներ ներկայացրած երկրների թիվը<sup>13</sup>**

<sup>11</sup> Managing security implications of international investment: Policy developments in a changing world, (March 2024), <https://www.oecd.org/investment/investment-policy/OECD-natsec-conference-2024-background-note.pdf>  
<sup>12</sup> <https://web.archive.org/temp/2024-06-07/674847-OECD-natsec-conference-2024-background-note.pdf>  
<sup>13</sup> Հեղինակի հաշվարկները հիմնված են ՏՀԶԿ տվյալների վրա՝ Investment policy developments in 61 economies between 16 October 2021 and 15 March 2023, published on April 2023, <https://www.oecd.org/daf/inv/investment-policy/Investment-policy-monitoring-April-2023.pdf> and Investment policy developments in 62 economies between 16 October 2020 and 15 October 2021 published in November 2021, <https://www.oecd.org/investment/investment-policy/Investment-policy-monitoring-October-2021-ENG.pdf>

կեր են ներկայացնում, քանի որ դրանք կարող են մուտք գործել տվյալ երկրի շուկա այլ նպատակներով, քան շահույթի ստացումն է:

Թեև վերջին տարիներին զարգացած երկրների կողմից կիրառվող կառուցակարգերը բացահայտ ձևով չեն առանձնացնում որևէ երկիր, սակայն առկա է հատուկ ուշադրություն Չինաստանից և Ռուսաստանից ներդրումների հոսքի նկատմամբ: Դրա հետ մեկտեղ, առանձին ճյուղի ներդրումների ստուգման կառուցակարգից աստիճանաբար անցում է կատարվում դեպի այնպիսի կառուցակարգ, երբ կարող են ստուգվել ցանկացած ճյուղի ներդրումներ՝ ավելի խիստ չափանիշներ սահմանելով առանձին ճյուղերի համար: Զարգացած երկրներում ամենից շատ ստուգման են ենթարկվում ՏՀՏ-ն և մշակող արդյունաբերությունը<sup>14</sup>:

ՏՀՏ-ն ուսումնասիրել է 61 երկրի ներդրումային քաղաքականություն, որն իրականացվել է 2020 թ. հոկտեմբերից մինչև 2021 թ. հոկտեմբեր և 2021 թ. հոկտեմբերից մինչև 2023 թ. մարտ ընկած ժամանակահատվածում:

Գծապատկերից պարզ է դառնում, որ զարգացած երկրներն ավելի հակված են օգտագործելու այնպիսի միջոցառումներ, որոնք միտված են օտարերկրյա ներդրումների՝ անվտանգության հետ կապված ռիսկերի կառավարմանը: Զարգացող երկրներն ավելի զգուշավոր են հսկողության կառուցակարգեր կիրառելիս: Այս խմբի երկրներից շատերը խուսափում են նման միջոցառումներից՝ մտավախություն ունենալով, որ ներդրումային վերահսկողության ուժեղ կառուցակարգերը կարող են խոչընդոտել ներդրումների ներհոսքը: Հետևապես՝ այդտեղ գործում են հին մոտեցումները:

ՆՍԿ մտցնելու կամ այն խստացնելու հարցում երկրների երկմտանքը կապված է այն ենթադրության հետ, որ խստացումը կամ հսկողությունը կարող է խոչընդոտել ՕՈՒՆ-ի ներհոսքը: Իրականում նման քաղաքականության ազդեցությունը բարդ է գնահատել: Ներդրողները նշում են, որ ներդրումների ստուգման կառուցակարգերն իրենք դիտարկում են որպես բազմաթիվ ազդակներից մեկը, երբ փորձում են գնահատել որևէ երկրում ներդրում կատարելու նպատակահարմարությունը: Եվ շատ քիչ է պատահում, որ իրենց ռազմավարությունը փոխվի՝ ըստ նոր ՆՍԿ-ի<sup>15</sup>: Ներդրումային որոշում կայացնելիս առաջնահերթությունը տրվում է շուկայի կայունությանն ու պետական կառավարման թափանցիկությանը: Ուստի կարելի է ենթադրել, որ վերոնշյալ կառուցակարգերը ներդրումային որոշումների վրա քիչ ազդեցություն ունեն:

Այնուամենայնիվ, վերջին տարիներին զարգացած երկրներում փոխվել է ՕՈՒՆ-ի կառուցվածքը: Քանի որ միաձուլումներն ու կլանումները կիրառվում են տեխնոլոգիաներին արագ հասանելիություն ստանալու համար, կա դրանց նվազման միտում: Փոխարենը՝ ավելանում են զրոյից կատարվող ներդրումները (greenfield investments): Ինչպես առևտրի պարագայում<sup>16</sup>, ներդրումների դեպքում ևս կա «բարեկամ» երկրներից կատարվող ներդրումների կշռի ավելացման միտում<sup>17</sup>:

Այսպիսով՝ աշխարհաքաղաքական տարածայնությունները հանգեցրել են նրան, որ փոխվել է օտարերկրյա ներդրումների նկատմամբ քաղաքականությունը՝ ավելի շատ կարևորելով դրանց անվտանգային բնույթը:

ՕՈՒՆ-ի ներհոսքի վերահսկողության

<sup>14</sup> Bencivelli, Lorenzo and Faubert, Violaine and Gallo, Florian Le and Négrin, Pauline, Who's Afraid of Foreign Investment Screening? (October 2023). Banque de France Working Paper No. 927, Available at SSRN: <https://ssrn.com/abstract=4603476> .

<sup>15</sup> Chojnowska A., Figures T., Nanda V., Rafih R., Rodríguez-Chiffelle C., Navigating the Rise in Foreign Investment Screening, (05.01.2024) <https://www.bcg.com/publications/2024/navigating-the-rise-in-foreign-direct-investment-screening?>

<sup>16</sup> Մովսիսյան Շ., Ռուսաստանի կայուն առևտուրն անկայուն աշխարհում, ՀՊՏՀ «Ամբեր» տեղեկագիր, 2024 (1), DOI: 10.52174/2579-2989\_2024.1-52:

<sup>17</sup> Chojnowska A., Figures T., Nanda V., Rafih R., Rodríguez-Chiffelle C., Navigating the Rise in Foreign Investment Screening, (05.01.2024) <https://www.bcg.com/publications/2024/navigating-the-rise-in-foreign-direct-investment-screening?>

միջոցառումներ սկսել են կիրառվել ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում: Այսպիսի միջոցառումները ազգային շահերը պաշտպանելու նպատակ ունեն: Թեև զարգացող երկրների մեծ մասը զգուշությամբ է վերաբերվում ներդրումների վերահսկողական կառուցակարգերին՝ մտավախություն ունենալով, որ դրանք կանդրադառնան ՕՈՒՆ-ի ծա-

վալների վրա, այդուհանդերձ վերջիններս երկրի ներդրումային գրավչության վրա ազդող բազմաթիվ գործոններից մեկն են միայն: Ուստի կարծում ենք՝ Հայաստանը, որը հայտնվել է աշխարհաքաղաքական տարածայնությունների կիզակետում, պետք է լինի այսպիսի միջոցառումների ակտիվ կիրառողներից մեկը՝ ելնելով իր ազգային շահերից:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ինչո՞ւ է Հայաստան գալիս Bank of Georgia-ն: Բանկերի միությունում անհանգստացած չեն, (20.02.2024) <https://hy.armradio.am/archives/552676>
2. ՀՀ միջազգային ներդրումային համաձայնագրեր, <https://investmentpolicy.unctad.org/international-investment-agreements/countries/9/armenia>
3. ՀՀ օրենքը «Օտարերկրյա ներդրումների մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872>
4. Հովսեփյան Լ. Ա., Օտարերկրյա ներդրումների խթանման ուղիները Հայաստանում, Регион и мир, 2019, No 6
5. Մովսիսյան Շ., Ռուսաստանի կայուն առևտուրն անկայուն աշխարհում, ՀՊՏՀ «Ամբերդ» տեղեկագիր, 2024 (1), DOI: 10.52174/2579-2989\_2024.1-52
6. Дорошенко С. В., Лаптева Е. В. Динамическое моделирование макроэкономических факторов потоков портфельных инвестиций в страны с формирующимися рынками // Ars Administrandi (Искусство управления). 2021. Т. 13, No 3. С. 359–380. DOI: 10.17072/2218-9173-2021-3-359-380.
7. Albori, Marco and Corneli, Flavia and Nispi Landi, Valerio and Schiavone, Alessandro, The Impact of Restrictions on FDI (November 25, 2021). Bank of Italy Occasional Paper No. 656, Available at SSRN: <https://ssrn.com/abstract=4032723> or <http://dx.doi.org/10.2139/ssrn.4032723>
8. Bencivelli, Lorenzo and Faubert, Violaine and Gallo, Florian Le and Négrin, Pauline, The rise in FDI screening in the EU and major advanced economies (December 2023), <https://www.banque-france.fr/en/publications-and-statistics/publications/rise-fdi-screening-eu-and-major-advanced-economies>
9. Bencivelli, Lorenzo and Faubert, Violaine and Gallo, Florian Le and Négrin, Pauline, Who's Afraid of Foreign Investment Screening? (October 2023). Banque de France Working Paper No. 927, Available at SSRN: <https://ssrn.com/abstract=4603476>
10. Chojnowska A., Figures T., Nanda V., Rafih R., Rodríguez-Chiffelle C., Navigating the Rise in Foreign Investment Screening, (05.01.2024) <https://www.bcg.com/publications/2024/navigating-the-rise-in-foreign-direct-investment-screening?>
11. Chojnowska A., Figures T., Nanda V., Rafih R., Rodríguez-Chiffelle C., Navigating the Rise in Foreign Investment Screening, (05.01.2024) <https://www.bcg.com/publications/2024/navigating-the-rise-in-foreign-direct-investment-screening?>
12. Investment policy developments in 61 economies between 16 October 2021 and 15 March 2023, published on April 2023, <https://www.oecd.org/daf/inv/investment-policy/investment-policy-monitoring-April-2023.pdf>
13. Investment Policy Review of Armenia, 2019, [https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3\\_en.pdf](https://unctad.org/system/files/official-document/diaepcb2019d3_en.pdf)
14. Managing security implications of international investment: Policy developments in a changing world, (March 2024), <https://www.oecd.org/investment/investment-policy/OECD-natsec-conference-2024-background-note.pdf>
15. OECD (2021), Middle East and North Africa Investment Policy Perspectives, OECD Publishing, Paris, <https://doi.org/10.1787/6d84ee94-en>.

**Шушан Мовсисян***Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ*

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

**БЕЗОПАСНОСТНЫЕ ИЗМЕРЕНИЯ ИНВЕСТИЦИОННОЙ ПОЛИТИКИ**

Геополитические разногласия последних нескольких лет оставили свой след в управлении потоками прямых иностранных инвестиций (ПИИ). Если до начала пандемии в мировой экономике активно устранялись препятствия для потоков ПИИ, то в последние годы вводятся новые механизмы проверки инвестиций. Большинство из механизмов связаны с вопросами национальной безопасности иностранных инвестиций. Эта тенденция характерна особенно для развитых стран. Развивающиеся страны более осторожны в применении ограничений, связанных с рисками безопасности, из-за опасений, что они могут негативно повлиять на приток прямых иностранных инвестиций.

**Ключевые слова:** *ПИИ, механизмы проверки инвестиций, национальная безопасность, геополитическая напряженность*

**Shushan Movsisyan***Expert at “Amberd” Research Center, ASUE*

SECURITY AND CHALLENGES

**SECURITY DIMENSIONS OF INVESTMENT POLICIES**

The recent geopolitical tensions have significantly influenced the management of foreign direct investment (FDI) flows. While the global economy was actively removing barriers to FDI flows before the COVID-19 pandemic, new investment screening mechanisms (ISM) have been introduced in recent years. The mechanisms are mostly related to the security implications of foreign investment. This trend is especially characteristic of developed countries. Developing countries are cautious about applying restrictions related to security issues due to concerns that they may negatively affect FDI inflows.

**Keywords:** *FDI, investment screening mechanisms, national security, geopolitical tensions*